

## ԳՐԱԲԱՐԻ ԵՐԿՈՒ ԳՐԱԵՎՈՐՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

Բաճապիր. գիտ. բեկնածու Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հին հայերենը կամ գրական լեզվի հին շրջանը ընդգրկում է V—XI դդ.։ Գրաբարը այդ շրջանում բազմաթանր ու հարուստ հայ մատենագրության միակ լեզուն էր, իսկ վաղ գրաբարը թերևս նաև համաժողովրդական ու խոսակցական լեզու։ XII—XVI դդ. միջին հայերենի շրջանն է, իսկ XVII դարից ձևավորվում ու գործառում է աշխարհաբարը կամ նոր գրական հայերենը<sup>1</sup>։ Բնականաբար, հենց միջին հայերենի շրջանից է սկսում գրաբարի կիրառության ոլորտների սահմանափակման միտումը։ Արտալեզվական և լեզվական մի շարք պատճառներով պայմանավորված՝ հին հայերենը որպես համակարգ իր տեղը զիջում է լեզվական նոր փուլին, նոր մտածողությանը։ Փաստորեն, XVI դարում արդեն զուտ գրաբարով գրված որևէ գործի չենք հանդիպում։

Լեզվի զարգացման բնական ընթացքն ու փոփոխությունները կարծես հաստատում են, որ գրաբարը «ապրել է իր դարը», որ այն վերջնականապես կորցրել է նաև գրավոր լեզվի գործառությունը։ Սակայն իրականում այդպես չեղավ։

Հենց XVII դարում, երբ նոր հայերենն էր հաստատում իր իրավունքները, արարվող գրականության զգալի մասը գրվում է դարձյալ հին հայերենով։ Դրաբարը նորից լայն շրջանառության մեջ է դրվում։ Պատահականությո՞ւն էր արդյոք սա։ Անշուշտ՝ ոչ։ Այս շրջադարձը պայմանավորված էր հայ իրականության առանձնահատկություններով։ Դարասկիզբը նախորդ գորշ ու մռայլ դարերի շարունակությունն էր։ Թուրք-իրանական 125-ամյա պատերազմը, ջալալիների շարժումը քայքայել էին երկրի տնտեսությունը։ Գաղթի ճանապարհները հասնում էին մինչև Ղրիմ, Ուկրաինա և Լեհաստան<sup>2</sup>, իսկ 1604 թ. Շահ Աբասի կողմից կազմակերպված մեծ գաղթը մեր պատմության մեջ աննախադեպ էր։

Սակայն թուրք-իրանական պատերազմի ավարտից հետո (1639 թ.) որոշակի նախադրյալներ ստեղծվեցին տնտեսական ու հոգևոր զարթոնքի համար (այդ զարթոնքի նախանշանները նկատելի էին դեռ 1616 թ., երբ Հայաստանն արդեն պատերազմական գործողությունների թատերաբեմ չէր)։

Առավել զդալի էր հոգևոր կյանքի աշխուժացումը։ Բացվեցին մի շարք դպրոցներ՝ Բաղեշում, Տաթևում, էջմիածնում<sup>3</sup>, XVII դարի սկզբից մեծ հռչակ էր վայելում Սյունյաց դպրոցը, որտեղ հարգի էր նաև ոչ կրոնական գիտությունների ուսուցումը։ Դպրոցական գործի առաջընթացը ուղեկցվում էր մա-

<sup>1</sup> Հայոց լեզվի շրջանաբաժանման մասին տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964։

<sup>2</sup> Ա. Շ. Հովհաննիսյան, Հայերի ուսական կողմնորոշման նախապատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 70։

<sup>3</sup> Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, Ա, էջ 14։

տնտեսության բուռն վերելքով: Երևան են գալիս պատմագրական, փիլիսոփայական երկեր<sup>4</sup>, բազմաթիվ մանր ժամանակագրություններ, հիշատակարաններ, ձևավորվում է հայ մեմուարային գրականությունը, որը նաև բուրժուական արտագրահարաբերությունների սաղմնավորման արդյունք էր<sup>5</sup>: Մեծ վերելք է ապրում տպագրությունը: Թեև հայերը առաջիններից էին, որ օգտվեցին Գուտենբերգի հուշակավոր գյուտից՝ 1512—13 թթ. Վենետիկում հրատարակելով մի քանի գրքեր, սակայն հետագայում, տպագրության գործի արմատավորման ու զարգացման պայմանների բացակայության պատճառով, այդ գործում առաջընթաց չկար: XVII դարում, հատկապես հայ դադթօջախներում (Ամստերդամ, Հոռմ, Վենետիկ)<sup>6</sup>, տպագրվում են բազմաթիվ ու բազմաբերնույթ հայերեն գրքեր: Եվ թեպետ շարունակվում էր ձեռագրերի ընդօրինակման ծանր աշխատանքը, այդուհանդերձ տպագիր խոսքը, դիրս ու գրականությունը հայ մշակութային կյանքի վերելքը պայմանավորող էական գործոններից եղան:

Պատերազմի ավարտումով սկսվեց նաև տնտեսության աստիճանական վերականգնումը: Հայ վաճառականները լայն կապեր էին ստեղծում Եվրոպայում և Ռուսաստանում: Աճում էր քաղաքների բնակչությունը, հստակորեն ուրվագծվում էր նաև քաղաքային կյանքը: Առանձնապես մեծ հուշակ էր վայելում Նոր Զուղան: 10000-ից ավելի բնակչություն ունեցող այդ քաղաքում ծաղկում էին արհեստներն ու առևտուրը: Նոր Զուղան չապազգայնացվեց, այն դարձավ մեր տնտեսության ու մշակույթի կենտրոններից մեկը՝ գրանով իսկ, կարծես, հատուցելով տեղահանության շարիքը:

Մայր երկրում և դադթօջախներում նկատվում են նաև սոցիալական խմորումներ<sup>7</sup>, աճում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: Եվրոպական երկրների ու կաթոլիկ եկեղեցու՝ Հայաստանի նկատմամբ աճող շահագիտական հետաքրքրությունը, նոր խաչակրաց արշավանքի ու Հայաստանն ազատագրելու շռայլ խոստումները ազգային-ազատագրական պայքարի հույսեր էին ծնում, որոնք հատկապես արևմտահայության համար ավելի ու ավելի էին հստականում<sup>8</sup>: Իսկ XVII դարի երկրորդ կեսից, Ուկրաինան Ռուսաստանին միացվելուց հետո, Լեհաստանի, Ուկրաինայի, Ղրիմի հայ գաղթօջախները իրենց քաղաքական հույսերը կապեցին Ռուսաստանի հետ<sup>9</sup>: XVII դարի վերջերից արտահայտվում էին նաև Ղարաբաղի մելիքությունների ազատագրական ձգտումներն ընդդեմ պարսից բռնակալության: Իսկ հաջորդ դարում Ղարաբաղը հայ ազատագրական պայքարի դրոշակակիրն էր:

Հասարակական կյանքի այս վերելքի հետ է կապվում նաև լեզվաքաղա-

4 Առաւել կարևորներից են Ա. Դավրիժեցու, Զ. Քանաքեռցու, Ե. Քյոմուրճյանի, Ստ. Լեհացու, Ստ. Զուղայեցու գործերը:

5 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 13:

6 Հայ տպագրության վաղ շրջանի մասին տե՛ս Լեո, Հայկական տպագրություն, հատ. Ա, Թիֆլիս, 1901: Թ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հատ. 1, Երևան, 1977:

7 Օրինակ, Նոր Զուղայում աղանդավորական քողի տակ բռնկված շարժումը իր էությունից նաև սոցիալական էր: Տե՛ս Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 76:

8 Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

9 Ա. Զ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 99:

քականության հարցը: Եթե փորձենք ուղղակի կապ տեսնել դարաշրջանի հիմնական իրադարձությունների և լեզվի միջև, ապա կարող ենք ասել, որ երկրի մասնատվածությունը, պետականության, ժողովրդի տարբեր հատվածների սերտ շփման բացակայությունը հանգեցնում էին բարբառային տարբերությունների խորացմանը, դժվարացնում միասնական լեզվի գոյության հնարավորությունը, իսկ թուրք-պարսկական գերիշխանության հետևանքով հայերենի մեջ էին ներթափանցում թուրքերեն և պարսկերեն բառեր: Վերոհիշյալ պայմանները լեզվի միասնականացմանն ու զարգացմանը չնպաստող երևույթներ էին: Բայց կար և հակառակը: XVII դարի առաջին քառորդից գրվում և թարգմանվում է մեծածավալ գրականություն, այսինքն՝ գրավոր լեզուն ակտիվ գործածություն է ստանում, իսկ մշակութային զարթոնքը պայմանավորող երևույթներից մեկը՝ ստեղծագործությունների ժանրային բազմաձևությունը, ի հայտ է բերում ոճական-գործառական նոր դրսևորումներ, որ լեզվի կենսունակության էական դորժոններից մեկն է:

Հայոց լեզվի զարգացման, տարբեր լեզվավիճակների փոխհարաբերության, լեզվի կանոնավորման, ուսուցման և ընդհանրապես լեզվական մշակույթի հարցերը դառնում են կենսական ու հրատապ: Պատահական չէ, որ հենց XVII դարում գրվում և տպագրվում են շատ քերականական աշխատություններ: Դրանք մեծ մասամբ վերաբերում են գրաբարին: Հիշենք, որ ոչ քերականագիտական երկերի պատկառելի մասի լեզվական ատաղձը դարձյալ գրաբարն էր: Համահայկական նկատելի վերելքի պայմաններում հասունանում է միասնական լեզվի գաղափարը, որը մասամբ արտահայտվում է տարերայնորեն, մասամբ էլ՝ առանձին անհատների ջանքերի շնորհիվ:

Ո՞ր լեզվավիճակը կարող էր հանդես գալ միասնական գրական գործառությամբ: Այսօր հեշտ է այդ հարցին պատասխանել. դա պետք է լիներ և եղավ նոր գրական հայերենը: Բայց XVII դարի նույնիսկ ամենաառաջադեմ ու հեռատես մտավորականի համար խնդիրը այնքան էլ պարզ չէր կարող ներկայանալ: Տվյալ շրջանում աշխարհաբարը այդ դերը չէր կարող կատարել, որովհետև գտնվում էր ձևավորման ակունքներում, լայն գործառություն չուներ և լեզվական նորմավորված համակարգ չէր ներկայացնում: Հասկանալի պատճառներով այդ դերը չէր կարող կատարել որևէ բարբառ, աննպատակահարմար էր և միջին հայերենը, որը վաղուց կորցրել էր միասնական-գրական ու պետական լեզվի գործառությունները, առատ էր բարբառային ու օտարամուտ տարրերով<sup>10</sup>:

Ամենահարմարը թերևս գրաբարն էր՝ իր կուռ քերականական համակարգով, մատենագրական հարուստ ավանդույթներով, լեզվական օտարամերժությամբ (խոսքը վերաբերում է թուրք-իրանական-արաբական բառերին): Գրաբարը ուներ նաև մի այլ առավելություն. և՛ միջին հայերենը, և՛ նոր հայերենը շատ առատ էին բարբառային տարրերով, իսկ քննարկվող շրջանում «հիմնական գծերով ձևավորված էին բարբառներն այն ձևով, ինչ ձևով նրանք նկարագրված են մեր բարբառագիտական աշխատություններում»<sup>11</sup>: Այլ կերպ ասած, հայերենի բարբառներն արդեն բազմաթիվ էին, որ լեզվի միասնակա-

<sup>10</sup> Այդ շրջանի լեզվաբաղադրականության մասին տե՛ս նաև Ս. Սարիսյան, Հայ գրականության պատմագրության հարցերից, «Սովետական գրականություն», 1962, № 7:

<sup>11</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, էջ 50:

նացման լուրջ խոչընդոտ էր: Մինչդեռ գրաբարը իր վերաբրառային համակարգով հավասարապես ընդունելի կարող էր լինել աշխարհագրական-տարածքային տարբեր միջավայրում ապրող հայության համար:

Ուրեմն, XVII դարում գրաբարի լայն գործառնությունը պատահական չէր: Արդյոք նույնակա՞ն էր XVII դարի գրաբարը վաղ գրաբարի հետ: Եթե կա՝ երևի է տարբերակիչ հատկանիշներ առանձնացնել, ասենք, V և X դդ. գրաբարի միջև, ապա բնականաբար, այդ տարբերությունները ավելի խորը կլինեն XVII դարում: Այս շրջանում հին հայերենի համակարգի հիմնական գծերի առկայության պայմաններում նկատելի են այլ լեզվավիճակների ազդեցություն, դրաբարը ժամանակի լեզվամտածողությանը ներդաշնակելու միտում: Սրանք գրաբարի տարածամանակյա քննությամբ բացատրվող երևույթներ են: Բայց համաժամանակյա կտրվածքով էլ (կոնկրետ XVII դար) գրաբարագիր գրականության հիման վրա առանձնանում է հին հայերենի երկու դրսևորում: Մեկը, այսպես կոչված, լատինաբան հայերենն է, որը տարբեր առիթներով քննության առարկա է եղել հայ բանասիրության մեջ<sup>12</sup>: Լատինաբան հայերենը այն ստեղծագործությունների լեզուն է, որը կրում է լատիներենի ազդեցությունը: Լատիներենին նմանակման սկզբնական փաստերը առկա են դեռևս XIV դարից: Բայց լատինաբան հայերենի՝ որպես լեզվական ուղղության կազմավորման ու համեմատաբար լայն կիրառության շրջանը, անշուշտ, XVII դարն է:

Լատինաբանության առաջացումը կապվում է հայ ժողովրդի մեջ կաթոլիկական քարոզչության հետ: Հռոմի պապի կողմից հովանավորվող և ֆինանսավորվող դավանափոխական քարոզչությունը ուղեկցվում էր համապատասխան գրականության տարածմամբ, որտեղ փորձ էր արվում հայերենի քերականական որոշ կարգեր հարմարեցնել լատիներենին: Քանի որ լատիներենի ազդեցությունը երևան է գալիս միայն գրաբարագիր գործերում, ուստի մեր կարծիքով լատինաբան հայերեն անվանումը ճիշտ չէ (մանավանդ, որ XVII դարում հայերենը գործառնում էր տարբեր լեզվավիճակներով), այն պետք է անվանել լատինաբան գրաբար:

Լատինաբան գրաբարը հայ բանասիրության մեջ միշտ բացասական գնահատանքի է արժանացել: Պատճառը գրաբարը մաքուր ու դասական անխաթառությամբ տեսնելու ցանկությունն է, ինչպես նաև՝ լատինաբան որոշ հեղինակների հայագավ ու օտարամետ գործունեությունը:

Մեր կարծիքով, լատինաբան գրականության ու լատինաբան գրաբարի գնահատման գործում որոշ ծայրահեղություն է նկատվում: Որոշակիորեն չի տարբերակվում երկու բան՝ լատինաբան քերականություններն<sup>14</sup> ու ոչ քերա-

12 Հստ Ռ. Իշխանյանի «XVII—XVIII դդ. չի եղել մեկ ընդհանուր միջբարբառային ժողովրդախոսակցական հայերեն, գոյություն են ունեցել տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը, սակայն, հասկանալի է եղել հայության զրեք բոլոր հատվածներին, տարբեր բարբառների ներկայացուցիչ հայերին» (տե՛ս Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII—XVIII դարերում», Երևան, 1979, էջ 7): Այս մեջբերման մեր կողմից ընդգծված հատվածը առարկելի է և փաստարկման կարիք ունի:

13 Տե՛ս Գ. Զարպհանյան, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ազգային վարժարանաց, Բ. Վենետիկ, 1878: Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 308—324 և այլն:

14 Լատինաբան քերականությունների մասին տե՛ս Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974: Վ. Մառուկյան, Գրաբարի կառուցվածքի

կանական այն աշխատությունները, որոնք կրում են լատիներենի ազդեցությունը: Այնինչ պարզվում է, որ քերականություններում տեղ գտած դոգմաներն ու նմանակումները հետևողականորեն չեն կիրառվում ոչ քերականական գործերում: Իսկ չէ որ լեզուն միայն քերականությունը չէ: Այսօր էլ արդի հայերենի քերականական որոշ ըմբռնումներ (հոլովման, խոնարհման համակարգի որոշ հարցեր, խոսքի մասերի տարբերակման հիմունքներ և այլն) տեղիք են տալիս շատ բանավեճերի, բայց դրանից լեզվի իրական վիճակը չի փոխվում:

Լատինաբան քերականությունների հեղինակներ են, օրինակ, Կղեմես Գալանոսն ու Ոսկան Երևանցին, որոնց ոչ քերականական գործերում լատինաբանությունը շատ չնչին է: Իսկ լատինաբանության ջատագով Հ. Հոլովը, Դավթի սաղմոսների մեկնությունը շարադրում է աշխարհաբարով<sup>15</sup>, որը նշանակում է, թե լատինաբան գրաբարը միակ ընդունելի լեզուն չի եղել նույնիսկ նրա ջատագովների ու տեսաբանների համար:

Պետք է տարբերակել նաև լատինաբան հեղինակներին: Այդ դեպքում բոլոր բացասական գնահատականները առանց երկմտելու կարելի է վերագրել այնպիսի անձնավորությունների, ինչպիսիք են Վարդան Հունանյանն ու Բարսեղ Քահանան: Նրանց գործունեությունը ոչ մի առնչություն չունի հայ իրականության հետ և սրանց կողմից հայերենը ենթարկված է ամենակամայական փոփոխությունների: Հենց միայն Հունանյանի գրքի<sup>16</sup> բառապաշարը դրա հաստատումն է: Պատահական չէ, որ հեղինակը գրքի վերջում գետեղել է բացատրական բառարան «հայերենից»—հայերեն մեկնելով ինքնաշեն բազմաթիվ բառեր: Նշենք մի քանիսը միայն. «այսուստեմ—յետս ցաթկեմ, աճալլալ—ագանելի ինչ ալլանդակ, կախեկ—բարակագոյն մասնիկը այն ամենից պտղոց, յորմէ կախին լոստոյ ծառուն...»: Ուրիշ հեղինակների մոտ թեև լատինաբանության տարրեր կային, սակայն լեզվական ատաղձը գրաբարն էր:

Իհարկե, անկախ որոշ հեղինակների և առանձին գործերի միջև նկատվող տարբերություններից, լատինաբան գրաբարը գոյություն ուներ և որոշակիորեն տարբերվում էր, այսպես կոչված, ավանդական գրաբարից: Դրաբարագիր այդ գրականության հիմքը դարձյալ պետք է կապել հայ իրականության, ավելի կոնկրետ՝ հայ գաղթօջախների աշխուժացման հետ: Լատինաբանությունը դարձյալ միասնական լեզվի ձգտման արտահայտություն էր, դարձյալ գրաբարի լայն գործառություն, որը այլ պայմաններում այլ որակ ստացավ: Լատինաբան գրաբարի որոշ առանձնահատկությունների մասին կխոսենք քիչ հետո:

Ի տարբերություն լատինաբան գրաբարի, XVII դարում հին հայերենը ուներ մի այլ դրսևորում: Այն շարունակում էր վաղ գրաբարի ավանդները, խուսափում էր լեզվական պատճենումից, նմանակումներից ու արհեստական

ուսումնասիրությունը XVII դարի քերականական աշխատություններում (Խեկեաժ. դիսկրտացիա):

<sup>15</sup> «Պարզաբանութիւն հոգևնուագ սաղմոսացն Դաւթի Մարգարէին, ժողովեալ ի վանազանից մատենից Վարդապետաց եկեղեցւոյ ևւ թարգմանեցեալ... ի նուաստ Յոհաննիս, Վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ», Վենետիկ, 1687:

<sup>16</sup> «Զերբածութիւն յերկինս թարգմանեցեալ ի հայկական լարբառ, ի Վարդանայ Յունանեան», յամի: Ներմարմնութեան տեառն 1671 ևւ րեզ իրարբերութեան Արամազնւոյ 1120 յԱմսփլիւղամի:

ձևերից, կրում էր նոր, ժողովրդական լեզվամտածողության կնիքը: Հատինաբան գրաբարից տարբերելու համար այն անվանենք ավանդական գրաբար և անդրադառնանք նույն դարաշրջանում հին հայերենի երկու դրսևորման մի քանի էական առանձնահատկություններին: Սկսենք բառապաշարից:

Ե՛վ լատինաբան, և՛ ավանդական գրաբարի բառապաշարի գերիշխող մասը դուրս էր բառային կազմն է: Նոր բառերը լատինաբան գրաբարը պատճենում է լատիներենից. հմմտ. անդրաշրջել (reflectir), վերատրուծին (additio), առխիսնջամ (adhinio)<sup>17</sup>:

Ավանդական գրաբարի բարդ բառերը, որոնք վաղ գրաբարում վկայված չեն, հարադատ են հայերենի բառակազմությանն ու հասկանալի. հմմտ. գեղջակից<sup>18</sup>, ծաբասէր «ծարիր սիրող»<sup>19</sup>, ամբաբերան «չհայհոյող»<sup>20</sup>:

Հանդիպում ենք նաև նոր ավանդված պարզ բառերի կամ նոր իմաստների. ինչպես՝ խառ «զարդ»<sup>21</sup>, խորք «աման, պարկ» (Ձբր., I, ԼԹ), մայր «բնագիր» (Քմբձ., 255), շշուկ «ուռուցք» (Ձբր., II, Բ), քէմ «շրջափակում» (Ձբր., II, Խէ): Գուցե այս կարգի բառերը հին են, բայց գրավոր մեղ չեն ավանդվել կամ էլ բնորոշ էին որևէ տարածքի: Մի խոսքով, հայերեն բառեր են և ոչ թե օտար նոր պատճենումներ:

Բառօգտագործման այս սկզբունքով է նաև ավանդական գրաբարը տարբերվում լատինաբան գրաբարից: Ինչ վերաբերում է փոխառյալ բառերին, ապա այս հարցում վերջինս ավելի մաքրամոլ է: Փոխառություններից խուսափումը թերևս նպատակադիր սկզբունք էր և եթե չլինեին անհարկի շատ պատճենումներ, ապա այս սկզբունքը կարելի կլիներ դրական համարել: Ավանդական գրաբարը օտար փոխառություններ օգտագործում է (իհարկե, ոչ այն չափով, ինչքան միջին հայերենը կամ բարբառները): Օտար բառերի նկատմամբ դիջողականությունը պատճառաբանվում է երկու հանգամանքով. նախ՝ ավանդական գրաբարով ստեղծված գրականությունը ավելի շատ է շոշափում թուրքիրանական իրականությունը՝ արտացոլելով վարչատնտեսական, կրոնական, պետական, ռազմական կյանքի շատ կողմեր (շահ, խան, բեկ, ասկյար, խագնա, վեզիր, մոլլա և այլն), այս տիպի բառերը չեն թարգմանվում: Երկրորդ որոշ օտար բառեր երկար ժամանակ գործառնելով, կարծես ավելի հասկանալի էին ժողովրդին, քան հոմանիշ հայերեն բառերը: Պատահական չէ, որ հեղինակները հայերեն բառերի կողքին երբեմն դնում են օտար հոմանիշը: Օրինակ՝ «Քսակս կազմեալ ի մոմլութէ, այսինքն մուշանբայէ»<sup>22</sup>: Իսկ շատ հեղինակներ հետապնդում էին նաև ժողովրդին հասկանալի լինելու ազնիվ միտում: Առհասարակ, ժողովրդական բառ ու բանը, թեև վոր խոսքերն ու ժողովրդական

17 Տե՛ս Ա. Ներսեսովիչ, Բաղդիրք լատինացւոց և հայոց, Հոռմ, 1695:

18 Տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 428 (այսուհետև՝ Դրնդ.):

19 Տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», XIII—XVIII դդ., հատ. I, Երևան, 1951, էջ 183, հատ. II, Երևան, 1956 (այսուհետև՝ ՄԺ):

20 Տե՛ս «Ջաքարիա Սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, Բ, ԻԳ (այսուհետև՝ Ձբր.):

21 Տե՛ս «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի», Երուսաղեմ, 1939, էջ 235 (այսուհետև՝ Քմբձ.):

22 Տե՛ս «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիժնցւոյ», III տպագր., Վաղարշապատ, 1896, էջ 183 (այսուհետև՝ Դվրժ.):

մտածողության այլ արտահայտություններ ավելի հաճախական են քննվող շրջանի գրաբարում:

XVII դարի գրաբարը վաղ գրաբարի քերականական կառուցվածքը դարձյալ անփոփոխ չի ներկայացնում: Եթե ավանդական գրաբարում այդ փոփոխությունների պատճառը ետգրաբարյան տարբեր լեզվավիճակների, կենդանի, խոսակցական լեզվի ազդեցությունն է, ապա լատինաբան գրաբարում փոփոխությունները արհեստական են, լատիներենի քերականական կարգերը կուրորեն պատճենելու արդյունք: Բերենք մի քանի օրինակներ. կեանք, միտք, փառք անեզական բառերը լատինաբան գործերում հանդես են գալիս կեան, միտ, փառ ձևերով, որովհետև դրանք անեզական չեն նաև լատիներենում: Լատինաբան գրաբարի որոշ նորամուծություններ նաև գրաբարը կանոնավորելու միտում ունեն: Այսպես, ածականների գերադրական աստիճանը կազմվում է միայն -եղ մասնիկի միջոցով<sup>23</sup>: Հմմտ. գերազանցագունեղ, ուշիմեղ և այլն: Լատինաբան գրքերում բ-ով և նախորդող բաղաձայնով վերջացող մի շարք բառեր (արութ, ծաղր, մեղր, կղմինար, քաղցր...) հոլովվում են ներքին թեքմամբ: Նույն կառույցի այլ բառերի նման հոլովումը խորթ չէր դասական գրաբարին՝ հմմտ. կայսեր, դստեր և այլն: Վերը ընդգծված բառերի նույնատիպ հոլովումը համաբանության արդյունք է՝ նույն կառուցվածքի բառերը միասնական հոլովման ենթարկելու ձգտում: Նույնիսկ Ա. Դավրիժեցին է օգտագործում փոքր ձևը. «Կային ի միասին մեծ և փոքր սիրով հանդարտեալք ի խցի» (295): Ուրեմն, ծաղեր, մեղեր... հոլովաձևերը կարելի է համարել ոչ միայն լատինաբան, այլև առհասարակ XVII դարի գրաբարի առանձնահատկություններից մեկը. բացառված չէ այդ ձևերի կիրառությունը ավելի վաղ շրջանում:

Լատինաբան գրքերում, հատկապես քերականություններում, նկատվում են առարկայի սեռային տարբերակում մտցնելու խիստ արհեստական, հայերենին անհարիր փորձեր. հմմտ. «Զի որպէս անձն մու նույնպէս և բնութիւն մու, քանզի ասէ յերգս երգոցն Սողոմոնի»<sup>24</sup>: Այս կեղծ ձևը նույնիսկ լատինաբան շատ հեղինակների մոտ, մանավանդ ոչ քերականական գործերում լայն կիրառություն չստացավ, իսկ բայի սեռային տարբերակումը արդեն համեմատաբար մեծ տարածում գտավ: Նախքան դրան անդրադառնալը նշենք, որ քննվող շրջանում ավանդական գրաբարով դրված գործերում հաճախական և օրինաչափ կիրառություն ունեն -իլ- լծորդության անորոշ դերբայի ձևերը: Հայտնի է, որ դասական գրաբարում -ի- խոնարհման անորոշ դերբայը -ե- խոնարհման բայերի նման ունեն -ել- վերջավորություն և միայն հատուկենտ դեպքերում ենք հանդիպում -իլ-ի: XVII դարի դրավոր աղբյուրներում համարյա առանց բացառության -ի- խոնարհման բայերը անկախ բայասեռից անորոշ դերբայում ունեն -իլ- լծորդություն<sup>25</sup>: Իհարկե, սա նպաստում է խոնարհման

<sup>23</sup> Վաղ գրաբարը գերադրական աստիճանի միասնական ձև չունի: Գերադրականությունը արտահայտվում էր բազմազան միջոցներով (տե՛ս Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս դարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 41): Պատահական չէ, որ ոչ լատինաբան, բայց լատինաբանությանը անշուշտ ծանոթ հեղինակներից ոմանք հաճույքով օգտագործում են լատինաբանների առաջարկած միջոցը (տե՛ս Քյումուրճյանի Թղթերը):

<sup>24</sup> Հ. Մրբուղ, Դաւանութիւն հաւատոյ, Կ. Պոլիս, 1773, էջ 281:

<sup>25</sup> Միջին հայերենն էլ էր ձգտում -ի- խոնարհման բայերը արտահայտել -իլ- լծորդությամբ (տե՛ս Սեկնարկներ միջին դրական հայերենի: պատմության», հատ. Ա, Երևան, 1973, էջ 302):

համակարգի մասնակի կանոնարկմանը, բայց այս դեպքում էլ դարձյալ շփոթություն է ստեղծվում բայասեռերի տարբերակման գործում, քանի որ -ի- խոնարհման բայերը միայն կրավորական սեռի իմաստ չեն արտահայտում: Եվ ահա լատինաբանները և դրանց հարող այլ հեղինակներ օգտվում են կրավորականության արտահայտման այլ միջոցից, այն է՝ տարբեր լծորդության անորոշ բայերի կրավորական սեռը արտահայտում են -իլ- լծորդությամբ. հմմտ. «Պիտոյ է նոցա ոչ լստ մասին լուսաւորիլ, այլ լնանիլ լուսով»: «Զի թէութիւն կարէ իմանիլ առանձին»<sup>26</sup>:

Ներգործականություն-կրավորականություն հակադրությունը լատինաբան գրաբարում նույնպես ձևաբանական արտահայտություն ստացավ՝ ողեցող հակադրությամբ, որտեղ -ող-ը ներգործական, իսկ -եցող-ը կրավորական սեռի ցուցիչ է: Ավանդական գրաբարում վաղ գրաբարի նման ենթակայական դերբայը միայն ներգործականություն էր արտահայտում, իսկ կրավորականությունը դրսևորվում է ենթ. դերբ.—անց. դերբ. հակադրությամբ: Հմմտ. «Քանզի յասելն այլ է ասացողն և ասացեալն: Նոյնպէս այլ է իմացողն և այլ իմացեալն»:

Անցյալ անկատար ժամանակում կրավորականություն արտահայտելու համար լատինաբան և ավանդական գրաբարում հաճախ օգտագործվում է -իւր- մասնիկը. հմմտ. շարժէր—շարժիր<sup>27</sup>: Բայց այս դեպքում էլ հստակություն չի ստացվում, որովհետև -իւր-ով ձևերը տարածվում են նաև -ի- խոնարհման շեղոք սեռի բայերի վրա: «Սնոտի յուսով փբացեալ նստիւր» (Զբր., II, 7): «Եւ ոչ վրիպիւր բնաւ» (ն. տ., էջ 68):

Լատինաբան որոշ գործերում հանդիպում ենք նաև գրաբարի քերականական ժամանակների համակարգից տարբերվող արհեստական ձևերի: Հմմտ. սիրիցէֆ, լուանայցէֆ, լնոյիւր, զարբնոյաֆ, դադարիցուֆ, սիրիցուֆ և այլն: Այս հարցում լատինաբանները հետևում են դարձյալ ոչ թե հայերենի ընձեռած հնարավորություններին, այլ լատիներենի բայի ժամանակաեղանակային համակարգի ընդօրինակմանը: Նույն սկզբունքով գրաբարի անկանոն բայերի խոնարհումը նույնպես կանոնարկվում է (տամ, սւրեմ, տրէի, սրիցեմ և այլն): Ավանդական գրաբարը արհեստական ժամանակաձևեր չի կիրառում, բայց այստեղ էլ նկատվում են քերականական ժամանակների գործառական որոշ առանձնահատկություններ: Օրինակ, այսպես կոչված, ստորադասական եղանակի ժամանակաձևերից առավել գործածական է երկրորդ ապառնին, որը ներառում է նաև վաղ գրաբարի առաջին ապառնի ժամանակի իմաստները: Սա նկատելի է XVII դարի բոլոր հեղինակների մոտ: Իհարկե, դա մեղ հիմք չի տալիս պնդելու, որ առաջին ապառնու կիրառության ոլորտների սահմանափակումը բնորոշ էր հատկապես քննության առնվող շրջանի գրաբարին: Ոչ: Երկրորդ ապառնու եղանակաժամանակային կիրառությունների ընդլայնման գործընթացը արդեն նկատելի էր ետդասական և նույնիսկ դասական շրջանի գրաբարում<sup>28</sup>, որ աստիճանաբար ավելի է խորանում հետագա դարերի ընթացքում:

26 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5074, ք. 26, 389:

27 Իւր-ով կրավորականների ակունքները նույնպես հին են՝ վաղ գրաբարում կիրառության սահմանափակ ընդգրկումով:

28 Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը («Էնգվի և ոճի հարցեր», III, Երևան, 1975, էջ 307):

Որպես ուշ շրջանի, այդ թվում և XVII դարի գրաբարի բայական համակարգի առանձնահատկություն պետք է նշել նաև վաղակատար ժամանակի (եալ+եմ) հաճախական կիրառությունը: Վաղ գրաբարում այդ ժամանակաձևը սահմանափակ կիրառություն ուներ: Ավարտունության կերպային հատկանիշ արտահայտող ժամանակաձևերից առավել հաճախականը անցյալ կատարյալն էր: Այդ հաստատվում է նաև վիճակագրությամբ: Ղուկասի ավետարանում (Ա—Դ) անցյալ կատարյալի ժամանակաձևը կիրառված է 141 անգամ, իսկ վաղակատարը՝ 11: Մարկոսի ավետարանում վաղակատարի հանդիպում ենք 16, իսկ Եզնիկի գրքի «Եղծ աղանդոց հեթանոսացն» բաժնում՝ 18 անգամ: Ղուկասի ավետարանի նշված հատվածների անց. կատարյալ ժամանակաձևից աշխարհաբար թարգմանության մեջ վաղակատար է ներկայացված 2-ը, անցյալի վաղակատար՝ 12-ը: Հովհաննեսի ավետարանում համապատասխանաբար 35 և 12<sup>29</sup>: Ուրեմն, իրոք դասական գրաբարում վաղակատարը սահմանափակ կիրառություն ուներ:

Թեևս վաղակատարի և անց. վաղակատարի (գրաբարի քերականների սինվանումով՝ հարակատար և գերակատար) նվազ գործածությունն էր պատճառը, որ որոշ ուսումնասիրողներ հակված էին դրանք հանելու քերականական ժամանակների համակարգից<sup>30</sup>: XVII դարի գրաբարում եալ+եմ կազմությունն ունի գործառության լայն ու կայուն ոլորտներ, և որոշակիորեն տարբերվում է դասական գրաբարի համապատասխան քերականական ժամանակի իմաստային-գործառական դրսևորումներից՝ ավելի շատ աղերսվելով աշխարհաբարի համանուն ժամանակի հետ: Այլ կերպ ասած, վաղակատարի ոլորտների լայնացումը ետգրաբարյան լեզվավիճակների անմիջական ազդեցությունն է:

Ավելացնենք, որ XVII դարի գրավոր աղբյուրներում առկա են վաղակատարի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակների ձևերը: Սակայն գրել եմ և գրեւ եմ ձևերի գործածությունը հստակորեն տարբերակված չէ, և նույնիսկ միևնույն հեղինակը երկու ձևերն էլ օգտագործում է: Բայց նկատելիորեն ծաղման հին ակունքներ ունեցող -ել տարբերակը ավելի հաճախական է:

Ավանդական և լատինաբան գրաբարը տարբերակվում են նաև հոլովման համակարգի որոշ առանձնահատկություններով:

Լատինաբան քերականները ներգոյական հոլովը ձևաբանորեն տարբերակելու համար գործածում էին ն(ոն) մասնիկը: Հմմտ. ըն բանում, նԱղամում, նարգանդ («Պարտէղ հոգեւոր», Մարսել, 1683, էջ 13): Ներգոյականի կազմության այս եղանակը տարածվում էր երբեմն նաև այլ խոսքի մասերի վրա (նոբում, նեղանիլն, նիւեան, նիմում և այլն):

Ավանդական գրաբարը պահում է վաղ գրաբարի հոլովման համակարգը, բայց կան ներհամակարգային որոշ փոփոխություններ, որոնք անշուշտ ժամանակաշրջանի լեզվավիճակների ազդեցություններ են:

Վաղ գրաբարի ու հոլովման բառերը XVII դարի գրաբարում հանդես են գալիս ինչպես ու, այնպես էլ այլ հոլովիչներով (հիմնականում ի, ա): Քննարկվող շրջանում ու հոլովման են ենթարկվում վաղ մատենագրության մեջ շա-

29 Տե՛ս նոր կտակարան: Չորս ավետարաններ և Դործք առաքելոց, Էջմիածին, 1969:

30 Տե՛ս Դ. Ա. և տ ի ք. և. ան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 287:

վանդված, այնպես էլ ո հոլովման պատկանող շատ բառեր (ՄԺ, II, 407). դաշտ Մշու (ՄԺ, II, 566), Թավրիղու, Ալաշկերսու, Արապկերու, Քանաքեռու (Ձքր., III, 44) և այլն:

Քննությունից պարզվում է, որ XVII դարի գրաբարում ո և ու հոլովիչների օգտագործման հստակ սկզբունք չկա<sup>31</sup>: Իսկ ընդհանրապես, առավել հաճախական է ի հոլովումը: Ինչ վերաբերում է, այսպես կոչված, արտաքին թեքմանը, ապա այս շարքի բառերը զգալիորեն ավելի քիչ են, քան վաղ գրաբարում, որովհետև «գրաբարյան ներքին թեքման ենթարկվող բառերի մեծամասնությունը միջին հայերենում անցել է արտաքին թեքման»<sup>32</sup>, իսկ թեք հոլովման ենթարկվող բառերի հարացույցը հիմնականում կանոնական չէ, այսինքն կան ներհարացույցային շեղումներ: Օրինակներ՝ Եւ ես մնացի ի գիւղն... (ԴվրԺ., 195), եկաւ ի գիւղէն (ՔմրՃ., 236), մեծ գեղջի (Դրնղ., 411):

Քույր բառի հոլովական հարացույցում չենք հանդիպում բոբբ, բեբբ, բերբբ ձևերին:

Հաճախական են նաև հոգնակի ուղղականի կազմության ոչ կանոնական ձևերը. կողմունբ, լեբունբ, փոխ.՝ կողմանք, լերինք, մաբղիկբ, փոխ.՝ մարդիկ և այլն:

Հիմնականում սրանք են այն մասնակի փոփոխությունները, որոնք նկատելի են մի կողմից վաղ և XVII դարի գրաբարի, մյուս կողմից՝ ավանդական և լատինաբան գրաբարի միջև:

Իսկ ընդհանուր առմամբ ավանդական և լատինաբան գրաբարի տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինը, ինչպես նշել ենք, օգտագործում է հայերենին հարազատ լեզվական իրակություններ՝ վաղ դրաբարից ունեցած շեղումներով հանդերձ, իսկ երկրորդի հենքը դարձյալ վաղ գրաբարն էր՝ օտար, այս դեպքում՝ լատիններենի նմանակման միտմամբ:

Ինչո՞ւ այսպիսի որակ ձեռք բերեց լատինաբան գրաբարը: Լատինաբան գրականությունը ստեղծվեց ոչ թե բուն հայրենիքում, այլ եվրոպական գաղթօջախներում: Լատինաբան հեղինակներից շատերը անմիջաբար հաղորդակից չէին հայության կենսական հարցերին, այդ թվում և լեզվամտածողությանը: Լատինաբանների մի մասն էլ այլազգիներ էին, որոնց համար հայերենի իմացությունը սոսկ դավանափոխական քարոզչության միջոց էր: Այդ քարոզչության նպատակով շրջանառության մեջ դրված գրականությունն էլ կրում էր կաթոլիկ եկեղեցու լեզվի՝ լատիններենի ազդեցությունը. աստիճանաբար լատիններենից կատարված նմանակումները երևան են գալիս նաև ոչ քարոզչական բնույթի գործերում: Գրականության ստեղծման վայրով է մեծապես պայմանավորված նաև այդ գրականության թեմատիկան: Եթե մայր հայրենիքում ապրող հեղինակները բազում էջեր են նվիրել գաղթին, կոտորածներին, սովին, փառաբանել են մեր անցյալն ու արարել տվյալ դարաշրջանի պատմությունը, ապա լատինաբանների ստեղծած գրականության պատկառելի մասը կրոնադավանաբանական գրքերի թարգմանություններ էին:

Այլ կարգի գործերում էլ նկատվում են միտումնավորություն, պատմական փաստերի կեղծում: Այսպես օրինակ, Կղեմես Գալանոսի ստվարածավալ

31 Այս հարցում գեր ունի այն հանգամանքը, որ ու հոլովման ենթարկվող շատ բառեր ծագումնաբանորեն կապվում են վաղ գրաբարի ո հոլովման հետ:

32 Ուկնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ. Երևան, 1975, էջ 16.

գրքի<sup>33</sup> առաջին մասը հայոց եկեղեցու պատմության շարադրանքն է, երկրորդ մասը բանավեճ՝ կրոնական եկեղեցական զանազան հարցերի շուրջ։ Հեղինակի դիրքորոշումը պարզ է։ Նա կաթոլիկ եկեղեցու ջերմ պաշտպան է, հայ եկեղեցու անդիջում քննադատ։

Լատինաբան գործիչների վնասը առաջին հերթին պետք է տեսնել հենց կաթոլիկական քարոզչության, քան լեզվի աղավաղման մեջ<sup>34</sup>։ Հենց նույն Գալանոսի գրքում լատինաբանության հետքեր շատ քիչ են։ Գրքի ղգալի մասը շարադրված է մաքուր գրաբարով։ Ահա մի հատված առաջաբանից. «Եւ զհարոյ գրիշս իմ անյարմարս՝ կարօղ լինիցի երբեք պատմագրել ըստ պատշաճի զմեծամեծ յիշելիսն, որք ի վաղ ժամանակէն անտի պատահեցան յեկեղեցին հայոց։ Եւ զհարոյ մեք յանգէտս յանձն առցուք ճառել զանցեալ ծածկագոյն խորհուրդս ալլասեռ աղգի, երբ մինչև ցայժմ ոչ կարաց ֆոանկ պատմիչ որ զբուռն հարել ի սունպիսի օտար պատմագրութիւնս։ Իայց սակայն յուսացեալ և յօգնականութիւն սրբոյ Աստուածածնին յօժարապէս ախորժեսցուք համարձակիլ և ի յայս անհուն ծովս մտանել մանաւանդ զի մեզ առաջնորդէ ոմն հայ պատմիչ...»։

Գալանոսի քերականական աշխատության մեջ<sup>35</sup> տեղ գտած արհեստական ձևերն ու բառապատճենումները այս գրքում հազվագեպ են կիրառվում։ Գալանոսի օրինակը եզակի չէ։ Իսկ դա նշանակում է, որ որոշ լատինաբանների՝ րաղաքական-քարոզչական և լեզվաշինական գործունեությունը և դրանց հետևանքները միևնույն չափանիշներով չպետք է գնահատել։

Կարո՞ղ էր արդյոք լատինաբանությունը լրջորեն խաթարել մեր լեզուն։ Նրա վտանգը թերևս ի նկատի ունենալով, Զարպհանալյանը գրելով, թե լատինաբանները «լեզուին աւերակներուն վրայ՝ օտար զարդերով և նոր ճարտարապետութեամբ շէնքեր կառուցած են»<sup>36</sup>։ Լատինաբան գրաբարը նա անվանում է լատին-հայ լեզու։ Աճառյանը գրաբարի հանդեպ լատինաբանների կատարած ձեռնարկումները «սոսկալի հարված» է համարում<sup>37</sup>։

Անշուշտ, եթե օտարաբանության այդ վտանգը արմատավորման հնարավորություններ ունենար, ապա իրոք, այն մեծ շարիք զլինի մեր մշակույթի, հատկապես լեզվի համար։ Իայց քննության առնվող շրջանում, այլև որանից հետո, լատինաբանությունը չէր կարող լայն տարածում գտնել։ Լեզվական ամեն մի ուղղություն, յուրաքանչյուր լեզվաքաղաքականություն միայն այն դեպքում կարող է գերիշխող դառնալ, եթե ունենա սեփական, ժամանակաշրջանին ու լեզվի բնական ընթացքին հարապատ սկզբունքներ։ Նույնիսկ այն նորամուծությունները, որոնք այս կամ այն չափով շրջանառության մեջ էին

<sup>33</sup> Կ Ղ Լ մ է ս Գ ա լ ա ն ո ս, Միաբանություն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հոռվմայ, հատ. Ա, Հոռմ, 1650։

<sup>34</sup> Գեռես XIV դարի սկզբին այդ քարոզչության աղբյուրի մասը կարճ ժամանակամիջոցում նախնականի շրջանի մի շարք գլուղերի բնականության մեծ մասը դարձավ կաթոլիկ։ Իրանք գոյատևեցին մինչև XVII դարի վերջերը և իսպառ իղած լինելով իրենց հոգևոր կապերը մայր ժողովրդից՝ մահմեդականություն բնորոշեցին (սեւս Յ ո վ հ ա ն ն է ս Ք ո ն ե ց ի, Յաղագոյ քերականին, Երևան, 1977, է. խաչիկյանի ներածությունը, էջ 29)։

<sup>35</sup> Կ Ղ Լ մ է ս Գ ա լ ա ն ո ս, Քերականական և տրամաբանական ներածություն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հոռմ, 1645։

<sup>36</sup> Գ. Զարպհանալյան, նշվ. աշխ., էջ 51։

<sup>37</sup> Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, Ա, էջ 12։

դրվում լատինաբան գրականության մեջ. իրոք նոր չէին և գալիս էին դեռևս հունաբան հայերենից: Օտար այդ ձևերը հայերենը մերժել էր դեռևս հազար տարի առաջ: Եվ ահա նոր պայմաններում, արդեն ոչ թե հին հունարենի, այլ լատիներենի միջնորդությամբ այդ ձևերը արհեստականորեն հայերենին հարմարեցնելու ճիգերը դարձյալ ապարդյուն էին: Եթե լեզվական այդ օտարամոլությունը մերժվեց հունարան դպրոցի ծառայման շրջանում, երբ էական տարբերություններ չկային դրավոր և խոսակցական լեզվի միջև և գրավոր ամրագրված հեշտորեն կարող էր դոքսաոել բանավոր լեզվում, ապա XVII դարում այն բնավ չէր կարող արմատավորվել և խաթարել լեզուն, որովհետև լատինաբանությունը առկա էր միայն գրաբարով գրված որոշ գործերում: Իսկ գրաբարը, չնայած իր որոշ աշխուժացմանը, հիշյալ դարաշրջանում լայն հաղորդակցման լեզվավիճակ չէր. բնականաբար նրան վերաբերող փոփոխություններն էլ լայն տարածում չէին կարող դնել: Գրաբարից էապես տարբեր խոսակցական լեզուն, բարբառները, նոր ձևավորվող աշխարհաբարը լատինաբանության տարածման բնական ու հզոր արգելքներն էին: Իսկ մեր մատենագրության դարավոր ավանդներն էլ նույնպես դիմագրողական մեծ ուժ էին լեզվական անհարկի փոփոխությունների հանդեպ:

Լատինաբան գրաբարը տվյալ դարաշրջանում հին հայերենի լայն գործառնության յուրատեսակ արտահայտությունն էր Եվրոպայի հայ գաղթօջախներում: Լատինաբանության արհեստական սկզբունքները և նմանակումները այդպես էլ խորթ մնացին մայր հայրենիքում արարվող գրականությանը, իսկ արդեն XVIII դարի սկզբից, շնորհիվ Մխիթարյանների գործունեության, լատինաբանությունը իսպառ վերացավ:

## ДВЕ РАЗНОВИДНОСТИ ГРАБАРА XVII ВЕКА

Кандидат филол. наук Л. Ш. АВАНЕСЯН

### (Резюме)

В XVII веке в армянской литературе вновь получил широкое употребление древнеармянский язык (грабар), что было обусловлено некоторыми особенностями культурно-экономической и политической жизни армян. Различаются две разновидности грабара XVII века. Для так называемого латинофильского грабара характерны латинские кальки (временные и падежные формы, частицы и т. п.). Влияние латыни особенно ощутимо в грамматических трудах того периода. Латинофильская литература создавалась в некоторых армянских колониях ряда европейских государств с целью пропаганды католицизма. Вторая разновидность, так называемый традиционный грабар, сохраняет основные особенности древнеармянского языка раннего периода. Здесь лексические, грамматические и стилистические новшества были результатом влияния среднеармянского и новоармянского языка. Латинофильский грабар, не такой естественный и доступный, как традиционный, прекратил свое существование уже с первой половины XVIII века, а традиционный грабар продолжал функционировать в армянской литературе.